



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ՓԵՏՐՈՒՄ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹԵ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս լիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 117

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻԻՆԸ

Օրհնութեան երգ երգեցէ՛ք Տիրոջ, դու՛ք՝ ազգեր բոլոր,
գովարանեցէ՛ք զայն, դու՛ք՝ ժողովուրդներ բոլոր:
Որովհետեւ այնքան զօրաւոր եղաւ
մեզի հանդէպ ցուցաբերած իր սէրը:
Տիրոջ հաւատարմութիւնը յաւերժական է:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՐԹԵ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՐԹԵ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 7:1-40)



ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԿ ՀԱՐՑԵՐ (7:8-16)

Շարունակելով իր մտածումները, Առաքելը անմիջապես կ'անցնի մեկ այլ ուրիշ կարգավիճակի մեջ գրնուող հաւաքացեալներուն. «**Ամուրիներուն եւ այրիներուն կ'ըսեմ.- աւելի լաւ կ'ընեն՝ եթէ ինծի պէս մնան, բայց եթէ չեն կրնար փոկալ՝ թող ամուսնանան, որովհետեւ նախընտրելի է ամուսնանալ քան ցանկութեամբ եռալ**»: (8-9 հմր) Առաջին հերթին նախ անդրադառնանք ովքեր են ամուրիները: Հերաքրքրականօրէն յունարէն բնագրին մէջ (Ակամոս) բառը օգտագործուած է, որ կը նշանակէ անամուսին, բայց այս բառով կարելի է ենթադրել, որ Առաքելը կարծէք իր խօսքը կ'ուղղէ, քակահին չամուսնացած այր մարդ կամ կոյս աղջիկ, եւ կամ ամուսինը կամ կինը կորսնցուցած մէկը: Այսպէս, սակայն, խօսքը կը վերաբերի շար աւելի նախապէս ամուսնացած, բայց այժմ անկին եւ անայր մարդոց եւ կիներու մասին, ինչպէս նաեւ այրիներուն: Որովհետեւ կոյսերու մասին հետոյ պիտի անդրադառնայ: Ուրեմն, այս պարագային Առաքելը կը փափաքի իրեն պէս ըլլան, քանի արդէն մէկը չունին, բայց եթէ երբեք պիտի չկարողանան փոկալ ու իրենց ցանկութիւնը սանձել, այդ պարագային աւելի լաւ է ամուսնանալ քան մեղքի մէջ իյնալ: Որովհետեւ այսպիսի պարագաներուն եթէ ներքին խաղաղութիւնը ու մանաւանդ հոգեւոր աճման ընթացքը պիտի խաթարուի ցանկութեան պատճառով, աւելի լաւ է ամուսնանալ:

Հիմա կարգը կու գայ ամուսնացած զոյգերուն, Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի պատուէրը կու փայ, ինչ որ կը կարդանք Աւերարաններուն մէջ եւս. «**Ուեւէ կին իր ամուսինէն թող ջբաժնուի, իսկ եթէ բաժնուի, կամ առանց ամուսնութեան թող ապրի եւ կամ դարձեալ հաշտուի իր ամուսին հետ: Նոյնպէս, ուեւէ այր իր կինը թող չձգէ**»: (10-11 հմր) Կորնթացիներէն ոմանք ունէին այն կարծիքը, «աւելի լաւ է չամուսնանալ»: Պօղոս Առաքել թելադրեց ըսելով, ամուսնացած զոյգեր իրարմէ շար հեռու մի մնաք, միայն ժամանակի մը համար եթէ պէտք է այդ պ փոխադարձ համաձայնութեամբ: Ամուրիներ եւ այրիներ աւելի լաւ կ'ընէք եթէ ինծի պէս ըլլաք, բայց եթէ չէք կրնար, ամուսնացէք: Ամուսնացած զոյգեր երբեք մի մտածէք ամուսնալուծման մասին, որովհետեւ Տիրոջ կողմէ հետեւեալ պատուէրը ունիմ. «**Ուեւէ կին կամ մարդ թող ջբաժնուի**», «**իսկ եթէ բաժնուի, կամ առանց ամուսնութեան թող ապրի եւ կամ դարձեալ հաշտուի**»: Սա կը նշանակէ, թէ Տիրոջ կողմէ խստիւ արգիլուեցաւ ամուսնալուծումն ու վերստին ամուսնութիւնը: Իսկ եթէ երբեք կարդանք Մարթնոս Աւերարանիչի հարուածը ուր բացառութիւն մը կայ այնպէս, յարակ է որ յերազային աւելցուած բացառութիւն պէտք է ըլլայ, նկատի առած միւս աւերարանիչները, որոնք երբեք այդ բացառութիւնը չեն յիշարակեր: Բացառութիւն այն իմաստով, որ «այր մը կրնայ ներել իր կինը, եթէ ան գոջումով ու ապաշխարութեամբ դարձի գայ: Սակայն ներելի չէ եթէ երբեք ան շարունակէ իր կենակցութիւնը իր կնոջ հետ, գիտնալով որ ան կը շարունակէ իր անպարկեշտ կեանքը: Կը նշանակէ մեղսակից ըլլալ» (Շնորհք Պատրիարք): Քրիստոսի խօսքերը յարակ էին ու մէկին, որուն համար ալ աշակերտները նախընտրեցին ըսելով, «աւելի լաւ է չամուսնանալ»: «Այն ինչ որ Աստուած միացուց մարդը թող ջբաժնէ»: Մովսէսի կողմէ փրուածը Աստուծոյ կամքին համաձայն չէր, այլ ժողովուրդին խստասրտութեան պատճառով: Իսկ Եկեղեցւոյ մէջ, ուր Աստուծոյ շնորհքին լիութիւնը կը վայելեն հաւաքացեալները, պէտք է ըստ այնմ ապրին Տիրոջ կամքին համաձայն: Անոր համար ալ կը նշանակէ ամուսնութեան միութիւնը ցկեանս է: Իսկ եթէ ցկեանս է, ոչ մէկ կողմին արքօնուած է ամուսնալուծում, ու մանաւանդ՝ վերամուսնութիւն: Ուրեմն ինչ ընել, երբ դժուարին պարագայ կայ: Այնպէս ինչպէս Աստուած Իր անհուն բարութեամբ եւ երկայնամտութեամբ եւ սիրով կը սպասէ ու կ'ընդունի իր սխալող ու մոլորեալ արարածը, նոյնպէս նաեւ ամուսնացած զոյգերը իրենք: Անոր համար ալ Առաքելը կ'ըսէ. «**կամ առանց ամուսնութեան թող ապրի եւ կամ դարձեալ հաշտուի իր ամուսին հետ**»:

Իսկ հիմա մէկ այլ ուրիշ դասակարգ մը, որ այս պարագային անոնք էին, որոնք նախապէս ամուսնացած էին, եւ հիմա մէկն ու մէկը քրիստոնէայ է եղած: Ուրեմն ինչ ընել շարունակել կենակցիլ հեթանոս կողակիցի հետ եւ կամ ազատ արձակել: Որովհետեւ հասկնալի պայմաններով կարելի է երեւակայել, թէ ինչպէս ապրիլ քրիստոնէական սկզբունքներով մէկու մը հետ, որ հեթանոսական բարքերով ու սովորութիւններով: Այս պարագային Առաքելը ինք կը պատուիրեմ, ոչ թէ Տէրը.- «**Եթէ ուեւէ հաւաքացեալ եղբայր ունի անհաւար կին մը կ'ուզէ իր հետ ամուսնացած մնալ, թող ջբաժնուի իր կնոջմէն: Նոյնպէս, ուեւէ հաւաքացեալ կին, եթէ ունի անհաւար ամուսին մը որ կ'ուզէ իր հետ**

ամուսնացած մնալ, թող չբաժնուի իր ամուսինն: Անհաւար ամուսինը կնոջ միջոցաւ Աստուծոյ ժողովուրդին կապուած կ'ըլլայ, եւ անհաւար կինը ամուսինին միջոցաւ Աստուծոյ ժողովուրդին կապուած կ'ըլլայ. այլապէս ձեր զաւակները հեթանոս պիտի նկատուէին, մինչդեռ հիմա Աստուծոյ ժողովուրդին մաս կը կազմեն»: (12-14 հմբ) Պօղոս Առաքեալ իր առաքելական հեղինակութեամբ այս պատուէրը կու փայ: Այսպէս Առաքեալը նկատի ունի, թէ ինչպէս հաւարացեալի կողմը, իր սրբութեամբ կրնայ նաեւ վարակիչ ըլլալ անսուրբ կողմին: Այնպէս ինչպէս ապօրինի ամուսնութիւնը կը պղծէ երկու կողմերը, նոյնպէս ալ օրինաւոր ամուսնութիւնը կը սրբացնէ երկու կողմերը: Արդիւնքը իրենց զաւակները, որոնք Աստուծոյ ժողովուրդին, այսինքն՝ Եկեղեցիին մաս կը կազմեն, այսինքն՝ սուրբ են: Սա չի նշանակէր որ հեթանոսներու հետ ամուսնութիւնը արփօնուած է: Այս պարագան միայն այն արեւն, երբ արդէն իսկ ամուսնացած են:

Միայն այն պարագային «եթէ անհաւար ամուսինը կամ կինը ուզէ բաժնուիլ թող բաժնուի: Նման պարագաներուն ռել պարտադրանք չկայ հաւարացեալ ամուսինին եւ կնոջ վրայ: Աստուած մեզ կանչեց խաղաղութեամբ ապրելու: Բայց ո՛վ գիտէ, թերեւս այդ ձեռով ամուսինիդ փրկութեան պատճառ կ'ըլլաս, ով կին. կամ դուն, ով մարդ, թերեւս այդ ձեռով կնոջդ փրկութեան պատճառ կ'ըլլաս»: (15-16 հմբ) Այսպէս, սակայն, Առաքեալը վերստին ամուսնանալու երաշխիք չէ որ կու փայ, այլ ազատագրում մը Բրիստոսի կողմէ դրուած ամուսնալուծման արգելքին: Որովհետեւ այս պարագային փրկի ունեցող ամուսնալուծումը քրիստոնէական ամուսնութիւնը չէ, այլ՝ հեթանոս քաղաքական ամուսնութեան լուծում: Առաքեալը նաեւ կը յիշեցնէ, որ Աստուած մեզ կանչեց խաղաղութեամբ ապրելու: Եթէ երբեք այդ խաղաղութիւնն է որ պիտի կորսուի, այն արեւն պարտադրանք չկայ հաւարացեալին համար, եթէ երբեք անհաւարը ինք կ'ուզէ բաժնուիլ: Սակայն, Առաքեալը փակաւին, կարծէք հաւանականութիւն մը ունի իր մտքին մէջ, ուր կրնայ հաւարացեալին ներկայութիւնը առիթ փալ անհաւարին դարձի գալու եւ Աստուծոյ ժողովուրդին մաս կազմելու, ինչպէս անոնց զաւակներուն պարագան: